ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

Republic of Armenia, Yerevan Municipality
Yerevan Scientific Medical Center

Республика Армения, Мэрия г. Еревана
Ереван Научно-медицинский центр

28.03.2024թ.

«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ N 24/2

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ԵԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/5 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Լինարե Մեդ» ՍՊԸ-ն / ՀՎՀՀ 01063047, գործունեության հասցեն՝ ք. Երևան, Նանսենի 7/43 / խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Լինարե» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 09212215/ հիմնադիրը հանդիսանում է «Լինարե Մեդ» ՍՊԸ-ի տնօրենը:

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 121-րդ կետով՝ 09.02.2024 թվականին կայացած նիստում, գնահատող հանձնաժողովը, 09.02.2024 թվականին կայացած նիստում, որոշել է չդիտարկել «Լինարե Մեդ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «Լինարե» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելը ինքնաբերաբար հանգեցնում է «Լինարե Մեդ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

ԵԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/5 ծածկագրով գնման ընթացակարգի կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է 19.03.2024 թվականին:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով. «Լինարե Մեդ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Հ. ԲԱԼՅԱՆ

Հր.Ներսիսյան 7 Հեռ. (010) 20-70-07
Պ. Սևակ 5 Հեռ. (010) 28-85-50 info@yerevanmc.am